

ԱՔԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔԸ (Արձակագրի 80-ամյակի առթիվ)

ՄԱԳԴԱ ԹԵՎԱՆՅԱՆ

Կյանքում Ա. Ավագյանը գրեթե ինքնամիտի, ավելի շատ լսող, քան խոսող անձնավորություն էր: Լայն շփումներ չէր ունենում ու մտքինը հաճախ անթեղում էր ներաշխարհում, զինովցած պահերին արտահայտվում ատամները սեղմած, արագ-արագ թափահարելով գլուխը: Մակայն, հակառակ սակավախոս բնավորությանը՝ սիրում էր անեկոտներ պատմել: Ձարմանալիորեն անթիվ անեկոտներ գիտեր: Գրականի փոքրիկ ծոցաանտ-բում գրանցումներ էր անում այս կամ անեկոտից, սեղմ շարադրում էությունը՝ հիշելու համար ամբողջը: Եվ աչքի անցկացնելով գրառումները՝ պատմում էր խնդալով: Հաճույք էր առնում դրանցից: Ընկերները պատմում են, որ եթե քախտությունը չխանգարեր, կարող էր օրերով անվերջ պատմել, քանզի թիվ չկար իմացած անեկոտ-ներին: Բայց ամեն անգամ պատմում էր մեկ-երկուսը, այնպես էր անում, որ լսողները կարոտով սպասեին հաջորդ հանդիպմանը:

Գիտեր նաև զանազան պատմություններ ու գրույցներ, որոնցից մի քանիսը գրի է առել եւ՝ ծավալուն գործերում, եւ՝ առանձին գործերի ձևով:

Դրանցից մեկն է «Մարդը անապատում» արեւելյան գրույցը, որն իմաստուն խորհուրդ ունի եւ բարութ-յան, խղճի, մարդու հոգեկան անսպառ կարելիությունների մասին մի գեղեցիկ ասք է:

«Ամենից առաջ ուղտերն զգացին մոտեցող հողմապատույտը: Որովհետեւ նրանք դանդաղեցրին քայլերը եւ սկսեցին սեղմվել միմյանց: Հետո ուղտապաններն էլ զգացին, որ մոտենում է նա՝ անապատի այդ սարսափելի հրեշը:

Սկզբում, ինչպես բոթ, անցավ մի բարակ խորշակ, հավաքեց ավազի բարակ շերտը, որից անմիջապես հետո հորիզոնում երեւաց հողմապատույտը:

Նա մոտենում էր թափով, զալարումներով:

Գլուխները կորցրած ուղտապանները չորեցրին ուղտերին, իրենք պատկեցին երեսնիվայր, հետո հասավ հողմապատույտը, ռոնաց, տակնուվրա արեց ու զնաց՝ հետեւում ավազե բլրակներ թողնելով»¹:

Եվիկական այս մուտքը Էնգիական մի շեշտվածություն է հուշում, որը չի հապաղում բացել հեղինակը: Երբ հողմապատույտի ավազե սյունը, երկինք զալարվելով, հեռանում եւ հասնում է հորիզոնին, ուղտապանները սթափվելով բարձրանում են, երեսները շրջում դեպի արեւմուտք՝ Մեքքե, ձեռքերը վեր բարձրացնում եւ աղոթում:

Ուղտերը նույնպես բարձրանում են կամաց-կամաց: «Մնաց միայն մի մայր ուղտ, որի ձագը խեղդվել էր:

Ուղտապանները տխրեցին... Բայց ի՞նչ անե՞լ, պետք է շարժվեք բարավանը:

Մայր ուղտը չէր բարձրանում: Նրան բռնեցին, հրեցին, բաշքեցին: Նա նստել էր անշարժ ու մայրում էր մեկ խեղդված ձագին, մեկ հորիզոնին, որտեղ հողմապատույտն այլևս չէր երևում»²:

Արեւելյան գրույցի մշակմամբ Ա. Ավագյանը ուղտի մեջ ամուր բնավորություն էր դրել՝ ընգծելով նրա մայրական բնքությունը մի կողմից, որոնքությունը՝ մյուս կողմից: Զարավանատերի գայրույթը, հայեցանքը, սպառնա-լիքն ու ծեծը նույնպես ոչինչ չեն տալիս. մայր ուղտը մնում է անշարժ՝ ապառաժի պես: Ուղտապանները փոր-ձում են օգնել քարավանապետին՝ բռնում են, բաշքում, հարվածներ հասցնում՝ միեւնույն է՝ մայր ուղտը տեղից չի շարժվում:

Ա. Ավագյանը լավ է որսացել արեւելյան գրույցի լեյսմոտիվը. սա այն դեպքն է, երբ սպառնալիքը, անգամ ծեծը անկարող են որեւէ բան անել՝ ազդել ուղտի վրա եւ վեր բարձրացնել, ստիպել շարժվելու: Ու գրողը բացում է գրույցի իմաստուն խորհուրդը՝ ինչ անկարելի է անել բռնությամբ, կոպիտ ուժի միջոցով, հնարավոր է դառնում մուրթ ու բարի վերաբերմունքով, մայր ուղտի սիրտը կարդալով. « Որտեղից-որտեղ հայտնվեց անապատի քա-միներից հոգնած, ծվատված մի ճամփորդ եւ ասաց.

-Չի կարելի այդպես... Դուք այդ ի՞նչ եք անում:

Ուղտի մոտից բուրբ վախով ու զարմանքով ետ բաշկեցին, իսկ ծվատված մարդը չորեց մայր ուղտի դի-մաց: Նա ինչ-որ ծխախոտ հանեց, վառեց, ծխեց, շայեց խեղդված ձագի ականջը, հետո մայր ուղտի թաց մոտքը: Նայեցին իրար, շատ երկար նայեցին: Եվ երբ անապատի մարդը վեր կացավ, վեր կա՞ցավ նաև ուղտը»:

Զարավանը կարող էր շարժվել: Մայր ուղտի հանդեպ անապատի մարդու ցուցաբերած ուշադրությունն ու սիրտանքը-փափկացնում են ապառաժի պես կենդանուն, վերականգնացնում, շարժում նրան համառորեն նս-տած տեղից:

Իսկ ո՞վ էր այդ անապատի ճամփորդը:

Զարավանապետի այն հարցին, թե «ու՞ր է գնում», նա պատասխանում է.

- Ես իմ օազիսն եմ փնտրում, բարեկամ...»³:

¹ Ա. Ավագյան, Պատմվածքներ, 1958, էջ 129:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 130:

⁴ Նույն տեղում:

Ամեն մարդ կյանքում պետք է փնտրի եւ ունենա իր օազիսը: Անապատի այս ճամփորդը իր օազիսի փնտրտուքի անհեշտ ճանապարհին հասցնում է նաև բարություն անել, դառնալ կարեկից, հասկանալ մայր ուղ-տի վիշտը: Ա. Ավագյանը սա առաջարկում է իբրեւ եւ՝ իդեալ, եւ՝ մարդու գործնական ուղենիշ, պահվածք, կե-ցության ձեւ: Միաժամանակ գրույցի ավարտամասում հայտնում է այն համոզմունքը, որ ամեն մի լավ արարք իզուր չի կորչում, բարի հուշ-հիշատակ է թողնում կյանքում: Ա. Ավագյանի մշակման մեջ լավ է գտնված ավար-տը, եւ հիանալի ընդհանրացում է արեւելյան այդ գեղեցիկ գրույցի խորքում արտահայտված հումանիստական փիլիսոփայության. «Զարավանը վաղուց հեռացել էր: Դանապարհը հիմա ավագոտ գառիվայրն էր իջնում, երբ բարձրավանդակին մայր ուղտը կանգ առավ՝ դարձրեց վիզը եւ վերջին անգամ նայեց ոչ թե դեպի այն կողմը, որ-տեղ խեղդված ձագն էր մնացել, նա նայեց այն կողմը, ուր գնաց անապատի մարդը»:

Իմաստուն լուծում, որն այնքան բնորոշ է ժողովրդական գրույցներին, արեւելյան ավանդություններին ու պատմվածքներին:

Իրական պատմվածքների ու պատկերների մեջ, Ա. Ավագյանը, այնուամենայնիվ, գերապատվություն է տալիս գեղարվեստական լուծումների երկու սկզբունքի, երկու մոտեցման: Դրանցից մեկը իրականության սո-ցիալական հետախուզման սկզբունքն է, որը հիմնականում արտահայտվել է նրա վաղ շրջանի ստեղծագործու-թյուններում, ապա շարունակվել ընդհուպ մինչեւ 50-ական թվականները ներառյալ: Մյուսը մեջ գլխավորը Իրա-նի աշխատավորության՝ հասարակ ու ընչազուրկ խավերի թշվառ, անապահով կյանքի գեղարվեստական ար-տացույցն է: Եվ արձակագիրը իր հետախուզումները կատարել է հիմնականում մարդկանց սոցիալական կա-ցության, նրանց կենցաղի, ըմտանքի, աշխատանքային առօրյայի ու հասարակական վերին շերտերի՝ իրենց անմիջական տերերի եւ օտարերկրյա զանազան խորհրդականների հետ ունեցած հարաբերությունների ոլորտ-ներից: Առանցքային են դառնում բախումների սոցիալալիզմ ուղղվածությունը, հասարակական տարբեր շերտե-րի կենցաղի ու ապրելակերպի սուր հակադրությունները: Գործողությունների հանգույցում առավելապես հերոս-ների թշվառության, անտանելի կյանքի պորբլեմներն են, որոնք գրեթե միշտ ավարտվում են որեւէ անձնական-ընտանեկան դրամայի պատկերմամբ, իսկ իբրեւ դրանց հետեւանք՝ ժողովրդական բողոքի, գրույցի կամ ըմբոս-տության նկարագրություն:

Պատմվածքների առաջին ժողովածուում (1950), թեմատիկ-բովանդակային առումով, այդպիսի գործեր էին «Լաւարույկի շուրջը», «Տխրություն», «Լուսն», «Կասկածանք Գուլմենը, նրա գործակալը եւ շուրջը»: Ա. Ավագյա-նը հետեւողականորեն շարունակեց այդ զիծը նաև երկրորդ ժողովածուում (1958): «Գնդապետ Բրաունը եւ խաղաղության աղավին», «Թշնամիներ», «Շահրե-Շադ-ուրախ քաղաք» պատմվածքները կրկին հավաստում էին արձակագրի մոր որոնումները թեմայի առավել համակողմանի բացահայտման ուղղությամբ: Երկրորդ գր-քից այդպիսի պատմվածքներ են եւս երկուսը՝ «Հարավի բեռնակիրները» եւ «Փախուստ»: Առաջինում՝ Նաբիի, -մյուսում՝ պատանի Յուլիի կերպարների միջոցով հեղինակը բավականին թանձր գույներով պատկերում է դար-ձյալ իշխող ու աղքատ խավերի անլուծելի հակասությունները՝ իհարկե, չտեսնելով կամ չառաջարկելով փրկու-թյան որեւէ ելք: Մա է իրականությունը, - ասում է Ա. Ավագյանը, - ճակատագիրը Նաբիի, նրա մեծ հարյուրավոր բեռնակիրների, պատանի Յուլիի ու նրա ընտանիքի անդամների համար գոյատևելու, փորձություններին դի-մագրավելու այս կացությունն է սահմանել: Նրանք պիտի ապրեն խեղճ ու թշվառ, ատամները սեղմած, պիտի դիմանան հարազատների կորստյան ցավին՝ սոցիալական-փակուղուց դուրս գալու ոչ մի հնար չգտնելով: Կա-րող են մերթընդմերք գալու, օտար տերերի նավերը չբեռնաթափել կամ հարուստի հախից գալու համար տղայական քայլերի դիմել, միեւնույն է՝ նրանց դրությունը չի փոխվելու: Իրանական աշխարհը, ավելի կոնկե-րետ՝ Իրանի հարավի սոցիալական-մարդկային հարաբերությունների ու հակասությունների խճճված մի կծիկ է հյուսել, որի մեջ որոնքականորեն զալարվում է անհատը: Այս համոզմունքը խտացման ուժ է ստացել Ա. Ավագ-յանի թեմատիկ նախասիրության առաջին հոսքի՝ իրականության սոցիալական հետախուզման գեղարվեստա-կան լուծումներում, ուր գործողությունները, հերոսներն ու դեպքերը գլխավորապես օբյեկտիվ դիտարկումների արդյունք են:

Գրողի որոնումների ու նախասիրությունների «երկրորդ հանգրվանը» առհասարակ մարդն է, մարդկային հոգեբանությունը, անհատի ներաշխարհը: Այստեղ Ա. Ավագյանը «օբյեկտիվ դիտարկումներին» հավելում է նաև սուբյեկտիվ մի ներքնատեսություն, արվեստագետին բնորոշ փիլիսոփայական այնպիսի աշխարհայեցո-ղություն, որոնցով գեղարվեստական լուծումները միտում են դեպի հոգեբանական ներթափացումների ու վերլու-ծությունների ոլորտը: Արձակագիրը բացվում է ստեղծագործական կարելիությունների ամբողջ ուժով ու հմայ-քով, իրականության կենդանի փաստը շնչավորվում է գորել ու տալավորիչ գույներով, հուզապրումը վարակող թափ է տալիս կերպարներին, գործողությունները դառնում են առիթքնող ու դրամատիկ: Այս հանգրվանում է Ա. Ավագյանը գտնում իր տարերքը. նրա արվեստը այս հանգրվանում է հասնում ներագոյեցության նոր-որակի: Օբ-յեկտիվ պատկերահանը վերաճում է հոգեբան-արվեստագետի, կյանքի՝ երեւութները ռեալության մեջ դիտող հե-ղինակը դառնում է զննող-վերլուծող, հերոսների ներաշխարհը թափանցող գեղագետ: Գրող-արվեստագետի հայտնությունը իրական փաստ էր այլևս, եւ Ա. Ավագյանը լայնորեն ճանաչվում է գրական հասարակայնու-թյան կողմից որպես մուրթ տաղանդի տեր արձակագիր:

1958 թվականին լույս տեսած «Պատմվածքներ» ժողովածուում Ա. Ավագյանը «Միջօրե» շարքի տակ ընդգրկել է երեք պատմվածք՝ «Պատմեշ», «Հանդիպում», «Լաւար», «Աստղերի ու սիրո մասին» եւ շարքի ընդհա-

¹ Արիգ Ավագյան, Պատմվածքներ, 1958, էջ 130:

նուր խորագիրն ունեցող պատմվածքը: Մրանց մեջ գրողը՝ իր աշխարհի հետ է, իր իսկ հերոսների հետ՝ այն հատկություններով, որոնք մերվում են իր խառնվածքին, կազմում են արվեստագետ-գրողի իր անհատականությունը: Օրերի մարդն է Ա. Ավագյանի հերոսը՝ իր առօրյայով, կենցաղով, իր սիրով ու հոգեբանությամբ, խոհերով ու զգացմունքներով: Չի հնարաստեղծել արձակագիրը, մտացածին կերպարներ ու իրադարձություններ չի հորինել: Նրա պատկերած մարդիկ հանդես են գալիս կոնկրետ միջավայրում, շվում են կենդանի գործողությունների հանգույցներում, ունեն իրենց հակումները, հույզերն ու ասպրամները: Չափազանց բնութագրական է, որ Ա. Ավագյանը վերը հիշատակված պատմվածքներում զգալի տեղ է հատկացրել բնությանը, հերոսներին հաճախ պատկերում է այս կամ տեսարանում՝ բնանկարի հետ սերտ աղերսներով: Այստեղ էլ կենտրոնացնում է հեղինակի գեղագիտական միտումը՝ որքան հնարավոր է բնությունը դարձնել միջոց՝ մարդու հոգին ճիշտ կարդալու, նրան ավելի ամբողջական, ավելի համակողմանի պատկերելու համար:

«Միջօրե» պատմվածքը Ա. Ավագյանը նվիրել է բնաշխարհի անգուղակյան երգիչ Համո Սահյանին: Եվ ինքն էլ բանաստեղծի պես հմայված բնության խաղերով, գույներով ու բույրերով՝ պատմվածքներին է փոխանցում իր հիացմունքը, իր սքանչացումը: «Օհան ամին ջուրը բաց է թողել այգիներում ու հիմա եկել, թաղվել է ձորազլիսի խոտերի մեջ: Ներքետում մոշիների զառիվայրն է մինչեւ գետը, վերետում՝ երկինքը շոգ ու կապույտ: Միջօրե...

Խառնվել են իրար բզեզները, գետի ծույլ խշշոցը, տապից հոգնած թռչունների մնչունը եւ գոլ բուրմունքը, որ բարձրանում է սովերներում փռված խոտերից, թուլացած սաղարթից, կոճղերից, հողից»:

Պատմվածքում Ա. Ավագյանը իրար է հյուսում բնաշխարհի մարդուն ու բնությունը՝ շնչավորելով վերջինը, իսկ բնաշխարհի տիրոջ հոգին լցնելով բնության կանչերով:

Օհան ամու կերպարի մեջ զգում են Համո Սահյանի վաստակած պապի մի նշխարը, զգում են միջավայրի հարազատությունը:

*Ջրել է իր այգին
Ու մարդը բահել է
Եվ արդար քրտինքով
Իր փունը պահել է...*

Օհան ամին էպիկական ընդգծված կերպար է, լավ գիտի հարազատ գյուղը, նրա մարդկանց՝ ահեղների ու ջահելների: Մտքերով միշտ նրանց հետ է, սալիս-առնում, քննում-վերլուծում է արած-չարածները:

Օհանի կերպարը ամբողջացնելու նպատակով՝ Ա. Ավագյանը պատմվածքում միմյանց շաղել է ընթացիկ-առօրեական փաստն ու վերհուշը. աղջկա՝ Գռնարի ու Արտեմի սիրախաղը թփուտներում, որտեղի՝ Գ-որտե՝ դ, հիշեցնում է նրան ու իր կնոջ՝ Նունի սիրո պատմությունը երիտասարդական տարիներին: Զանգ՝ տարի է անցել, ծնվել է ավագ որդին՝ Դավիթը եւ ընկել Կերչի մոտ: Ուրիշ էր Դավիթը, խորհում է Օհան ամին, «արմատի պես կառչած էր հողին: Երբ մարտյան քամին կոտրում էր կեռասենու ճյուղը, նրան թվում էր, թե աշխարհում ինչ-որ զարհուրելի բան պատահեց, ավելի զարհուրելի, քան հեթաթի քարե կարկուտը:

Օհան ամին բռնացրել տրորում է մի աչքը, իսկ մյուս աչքից մի կաթիլ արցունք ընկավ խոտին»:
Հետո ծնվել է Անդրանիկը, դարձել բժիշկ, ամուսնացել ու ապրում է մի քանի սար այն կողմ, աղջիկ ունի՝ անունը՝ Լիլիթ: Ապա աշխարհ եկան ծույլ ու քնկոտ Վարազդատը, Գռնարը, որ հիմա քսան տարեկան է եւ ոչ մորն է լսում, ոչ իրեն:

Այսպես, Ա. Ավագյանը հերոսի հուշ-մտորումների միջոցով անցկացվում է նրա կյանքի որոշ փաստեր ու դրվագներ, մի կողմից՝ շոշափելիորեն տեսանելի դարձնում բնաշխարհի մարդու կերպարը, մյուս կողմից՝ շատ ուրույն ձևով պատկերում մի ամբողջ ընտանիք՝ իր անձնակազմով, նրանց կյանքի առանձին մանրամասներով: Ինչու՞ Անդրանիկը թողեց գերանդին ու ծառերը՝ փախավ Երեւան, Դավիթը ընկավ Կերչի մոտ, մյուսները ինչու՞ իրեն չեն լսում... Էլի ինչ-որ բաներ գալիս անցնում են Օհան ամու մտքով ու «խառնում այս նե՛ղ, փոքրիկ լեռնաշխարհում, որից այն կողմ կարծես թե հողագունը վերջանում է»¹:

Կերպարի դիմամիկայի ու միջօրեի շոգից անշարժացած բնության միջեւ նմանության եզրեր է գծում պատմվածքագիրը: Օհանի խոհերը հանդարտ են ծավալվում, «շոգ է՝ այնքան շոգ, որ Օհան ամին ծուլանում է հիշողությամբ ավելի հեռուները գնալ»²:

Վերհուշից կրկին արթնանում-իջնում է դեպի ներկան, թփուտներում ծածուկ թռչող անող աղջկա՝ Գռնարի մեջ տեսնում Նունիին՝ եւ գնում դեպի այգիները:

Խնձորենու բունը ինչ-որ սատանա քերծել է: Օհան ամին շոյում է ծառն այնպես, ինչպես երեխայի գլուխն են շոյում: Հով էլ այստեղ: Օհան ամին նստում է խոտերի մեջ եւ հիշողությամբ նորից հեռուները քրքրում:

Օհան ամու համար շուտ է եկել աշխարհը, բայց այդ աշխարհում էլ լավ բան մնում է...³:

Էպիկական պատմվածք Ա. Ավագյանը տալիս է հուզական-բնարական հագեցվածություն, ստեղծում վարակիչ մթնոլորտ:

Հոգեբանական նուրբ անցումներով է զարգանում «Պատմե՛ք» պատմվածքը եւ չափազանց բնութագրական է Ա. Ավագյանի գրական խառնվածքին: Այստեղ էլ գրողը, իր շատ ստեղծագործությունների նման, չի տարվում մանրութներով, ոչ էլ հանգույցը ծանրաբեռնում է «նախապատրաստող» ինչ-ինչ ենթապատմություններով: Վահանի դրաման սկսվում է հանկարծակի: Որդու հետ զրոսանքից, կիրակի օրը, տուն է վերադառնում, եւ նախասենյակում բույրը հայտնում է ցավալի լուրը՝ կինը փախել է ուրիշի հետ: Կնոջ՝ Նինայի նամակը երբորդ անգամ կարդալուց հետո միայն շփոթահար Վահանը կարողանում է հասկանալ կատարվածը: Իսկ նամակում գրված էր. «Դ՛ւմ բոլոր, բոլոր մաքառումներից հետո ես պարտվեցի: Ամբողջ մեկ տարի լուռ փոթորիկ էի ապրում եւ ի վերջո այդ փոթորիկն ինձ թեաթափ արեց: Ես չկարողացա ետ քաշվել վիհի եզրից, չկարողացա ինձ հաղթահարել, նետվեցի, եւ վերջ:

Ես փախչում եմ Թորգոմի մոտ: Մենք հաստատվելու ենք մի ինչ-որ հեռու քաղաքում, որտեղ Թորգոմը պիտի աշխատի: Այս արարքի համար ես ինձ հաշիվ չեմ տալիս, չեմ էլ կարող հաշիվ տալ: Դու ինձ ներել չես կարող, եւ ես այդ բանը չեմ խնդրում քեզանից: Ես ահավոր մեծ հանցանք եմ գործում, եւ եթե օրերից մի օր զոջամ, չեմ վերադառնա, ինքնասպան կլինեմ: Լավ նայիր Գազիկին, դա իմ միակ աղերսանքն է»⁴:

Տարված աշխատանքով, անհունորեն ընտանիք, կին, երեխա սիրող, նրանց հետ կապված Վահանը ոչ միայն չէր նկատել, որ ամայեր են կուտակվում իր տան վրա, այլեւ մտքով անգամ չէր կարող անցնել, թե Նինան ընդունակ է նման արարքի: Եվ ահա նա կանգնած է դաժան իրողության առջեւ՝ կինը փախել է Թորգոմի հետ, մի մարդու, որը եղումուտ ուներ իրենց ընտանիքում, վստահում եւ հավատում էր նրան: Հետո՞, ի՞նչ պիտի լինի փոքրիկ Գազիկի հետ, ո՞նց պիտի ասի կամ հասկացնի նրան կատարվածը: Իսկ բույրը՝ Թագուհին, անդադար աղ է լցնում Վահանի վերքին, հայեցում Նինային:

- Նա վաղուց պետք է գնար, շատ վաղուց:

Վահանը բութ հնայացքով նայեց քրոջը եւ կարծես բնագոյարար հարցրեց.

- Ինչու՞ վաղուց:

Թագուհին ձեռքը տենդազին թափահարեց օդում եւ ասաց.

- Որովհետեւ դա կատու էր եւ ոչ թե կին:

- Կատու՞, - հարցրեց Վահանը:

- Այո՛, կատու, մարտյան կատու:

Վահանն ուզեց հարցնել ինչու՞ մարտյան կատու, բայց սթափվեց, նայեց շուրջը... Մայիսյան այս օրվա պես ամեն ինչ պարզ է. Նինան փախել է Թորգոմի հետ. այնտեղ շքապահարանը խառնված է. չկան նրա հագուստները. իր դիմաց նստած է բույրը. Գազիկը խաղում է դրսում. այսօր կիրակի օր է... Թագուհին ինչու՞ է ասում մարտյան կատու: Նինայի մոխրագույն աչքերի պես հրաշալի աչքեր մեկ էլ վեպերում են լինում...»:

Ա. Ավագյանը Վահանի կերպարի զարգացումը հեշտ սահմանքներով չի տարել: Նա բարդ անհատականություն է եւ կանգնած բազում հարցականների առաջ: Մակայն դժվարագույնը երեխայի հանգույցն է, պետք է մի բան հորինել՝ Գազիկին համոզելու, որ մայրը մեկնել է բուժման, սանատորիա, այդպես են խորհուրդ տվել բժիշկները:

Վահանը քառասունամյա իր կյանքում եղել է զուսպ, ինքնատիրապետող, չի ունեցել ուժեղ ցնցումներ՝ ոչ խիստ հիասթափություններ, ոչ առանձնակի վայելքներ կյանքի երջանկություններ: «Խորին համոզմունքով էր նա նայում կյանքին, հավատացած լինելով, որ իրերը եւ ամեն ինչ աշխարհում ընթանում են իրենց ճիշտ հունով, ամեն ինչ դրված է իր տեղում, ամեն ինչ հարթ է ու շիտակ, իսկ եղած խորդուրդները, բոլոր անհարթությունները, բոլոր խոչընդոտները կյանքում անցողիկ բաներ են»²:

Վահանը այդպիսին էր նաեւ աշխատանքում՝ զուսպ ու հավասարակշռված: Հանգիստ, դանդաղ, չէր շտապում, բայց եւ չէր դուրս տեղում: Գործին նայում էր ամեն կողմից, թափացում էր մինչեւ խորքերը, զննում բոլոր անկյունները: «Դեռ ուսանողական տարիներին նրա մասին ասում էին՝ «Վահանը կյանքի բոլոր հարցերը, բոլոր առեղծվածներն ուզում է լուծել եռանկյունաչափությամբ ու մաթեմատիկայով»³:

Մակայն այդպիսի անձնավորությունը կարճ էր քավարարել Նինային: Վերջինս՝ իր հոգեբանությամբ, հայացքներով, իր խառնվածքով - որքա՞ն կոյնամար Վահանի չափված-ձեւված բնավորությամբ:

Այս դիլեման Ա. Ավագյանը լուծել է հոգեբանական վերլուծությունների, նրանց ներքին աշխարհի բացահայտման ոչ հեշտ ճանապարհով: Առանց-աղճատելու թե Վահանի, թե Նինայի կերպարները, նրանց տարբեր անհատականություններն ու բնավորությունները գծելով ըստ յուրաքանչյուրի «գրաֆիկական ճշգրտության», հեղինակը բացատրում-պատճառաբանում է կողմերի վարքագիծն ու «արդարացումները» ստեղծված պարագայում:

Գրողի սուզումները հերոսների ներաշխարհը ամենեին էլ ճակատային չեն, ոչ էլ ուղղազիծ: Գործ ունենք այստեղ կյանքում հաճախակի հանդիպող երեւոյթի կամ փաստի հետ: Եւ մարդկայնորեն հասկանալի են Վահանի ու Նինայի բնավորությունների զարգացումը: Մերը Վահանի սրտում «ծնունդ առավ՝ ինչպես բացվող մայիսյան օր»⁴, - գրում է Ա. Ավագյանը:

¹ Արիգ Ավագյան, Պատմվածքներ, 1958, էջ 6:

² Նույն տեղում, էջ 10:

³ Նույն տեղում, էջ 10-11:

¹ Արիգ Ավագյան, Պատմվածքներ, 1958, էջ 13:

² Նույն տեղում, էջ 17:

³ Նույն տեղում, էջ 17:

⁴ Նույն տեղում, էջ 18:

Մինչդեռ քույրը՝ Թագուհին, ընկերները, ծանոթները, խոսքերը մեկ արած, փորձում էին համոզել նրան, որ Նինան քեթևտոյիկ է, ծնվել է միայն սիրարկածների համար, իսկը մադամ Բովարի է և չի կարող նրան կին լինել։ Վահանը, սիրո շնորհիվ, կարողանում է հաղթահարել ընդհանուր դիմադրությունը, հավատարիմ մնալ իր զգացումներին ու ամուսնաձուլ Նինայի հետ։ Հետո ծնվում է Գագիկը, կյանքը կարծես նոր իմաստ ու բովանդակություն է ստանում նրանց համար։ Այնուամենայնիվ Վահանի բնավորությունը քիչ բանով է փոխվում, և ժամանակի ընթացքում Նինան ավելի մոտիկից է տեսնում ու զգում, որ Վահանը խաբուսկանքով բավականին հեռու է իր բուռն, անհանգիստ բնավորությունից։ Եվ գրողը ճիշտ ժամանակին է հանդես բերում Թորգոմի կերպարը՝ ստեղծելով ավանդական եռանկյունու պրոբլեմը։ «Օրերից մի օր հայանվեց Թորգոմը և միանգամից դարձավ նրանց սիրելի այցելուն, սիրելի բարեկամը։ Նինայի հետ նա դասընկեր էր ևղել միջնակարգում, միասին էին ավարտել դպրոցը, հետո այդ անհանգիստ, կարծես շարունակ ինչ-որ բան պրպտող, ինչ-որ տեղ շտապող, բարձրաձայն ապրող մարդը կյանքում սկսել էր սլանալ բոլոր հոգներով, իր բախտը փորձել էր ամեն տեղ ի, վերջո դարձել էր ֆիզկուլտուրիկ»։ Հեղինակի մեկնաբանություններից անյուխեսու պարզ է դառնում, որ Վահանը Թորգոմի հաճախակի այցելություններից թեկուզ շատ չէր ակնարկում, սակայն գոհ էր այնքանով միայն, որ իր հետ աշխուժություն էր բերում, առնուր լցնում ծիծաղով, գրոյցով և այլն։ Նրանց մաքերի փոխանակությունից, - այս կամ այն կինոֆիլմի և նոր բեմադրության առթիվ ծագած վեճերից Վահանը հանգում էր այն եզրակացության, որ Թորգոմը, ի վերջո, լուրջ բաներ չի ասում, այլ միայն իր աղմուկով, գոռում-գոչյանով, բառարաններից թոցած փրում բառերով կամենում էր խելքը գլխին մարդու ապավորությունը թողնել։

Իսկ Նինայի հոգում ուրիշ ապրումներ են ծնվում։ «Թորգոմը խոսում էր ոգևորված, բարձրաձայն, չափազանցած շարժվածությամբ։ Նա ուներ բարեձուլ կազմվածք, համակրելի դիմագծեր, տառիչ ձայն, ուսում էր ակնարկալի, լավ խմում էր, ծխամոմ էր ծխում»¹։

Աղջկական տարիներից շրջապատված քերևու նայող, արագ հավշտակվող Նինան չէր կարող ամուսնու պես սառնությամբ ընդունել իրենց մշտական այցելուի այդ գծերն ու հատկությունները։

Մինչև այստեղ Ա. Ավագյանը իր հերոսներին՝ Վահանին ու Նինային, պատմվածքի կառուցվածքային ամբողջության մեջ պատկերում է նախադրություն (էքսպոզիցիա) սանդղակում։ Հանգույցի բացումը, կոմֆլիկտի սրումը, որը նույն է թե՛ գործողությունների դիմամիկ զարգացումը ծավալվում է այն բանից հետո, երբ կատարվել է արդեն փախուստը։ Պատմվածքը խորագրված է «Պատմե՛ք»։ Իսկ այդ պատմե՛քը Վահանի և Նինայի միջև կանգնած երեխան է՝ Գագիկը։ Փախուստից հետո, իրականում, սկսվում է դեպքերի ու հանգամանքների զարգացման այնպիսի գլխապատյալ, որը չէր կարող չբերել կոմֆլիկտի շուտափույթ լուծում։

Սկզբում հեշտ էր Գագիկին համոզել, թե մայրը մեկնել է սանատորիա բուժվելու, կարող էին հավատացնել, թե Նինան կվերադառնա մեկ ամսից, ապա՝ բժիշկների խորհրդով նորից պիտի երկարաձգվի «բուժումը» և այլն։ Բայց մինչև ե՛րբ։ Գագիկը արդեն տասնմեկ տարեկանի մեջ է, որքան էլ մայրիկի «բուժումը» խիստ անհարժեշտ է, ինքը ավելի ու ավելի է կարոտում։ Հասնում են ամառային անձակությունից օրերը։ Մոր հետ պետք է մեկնեն Ստեփանավան հանգստանալու, նա սպասում է, իսկ հայրը խորհուրդ է տալիս Թագուհու հետ գնալ։

- ... Ես կուպանեմ մայրիկիդ, գուցե նա մի քիչ էլ ուշացավ։ Մենք Ստեփանավան կգանք մինչև օգոստոսի առանհինգը։ Գագիկի հոգների միջև ընկած ծալքը նորից խստացավ, աչքերը դարձան խոժոռ, շրթունքները ավելի սեղմվեցին։ Նա արդեն զգում էր, որ հայրն ու հորաքույրը ինչ-որ բան թաքցնում են իրենից, սրտում են ճշմարտությունը, անընդհատ իրանք-իստ խորհրդավոր հայացքներ փոխանակում»²։

Գրողը անցնում է Գագիկի ապրումների, ներքին ավայաանքների պատկերմանը և դա կատարում է նուրբ թափանցումներով, հմուտ հոգեբանի «զգուշությամբ»։ Երեխան արդեն նկատում էր, որ հայրն ու հորաքույրը հաճախ շշուկով են խոսում, իսկ երբ հայանվում է ինքը՝ ընդհատում են շշուկները, փոխում են լարված հայացքները։

Երեխայի հոգեկան շատ համոզիչ ու բնական վիճակն է ցույց տալիս արձակագիրը։ Թող հայրը խոստանա, թե ամառանոց է գնալու, Թագուհին կրկին գայլերի ու թակարդների մասին պատմություններ հորինի իրեն զբաղեցնելու նպատակով, պարզ է այնու, որ մի լուրջ բան է պատահել։ Իսկ թե ի՞նչ՝ Գագիկը չէր կարող պատկերացնել։ Հոգեկան ապրումները ազդում են ուսման վրա, քվարանությունից ու պատմությունից վատ գնահատականներ է ստանում և, այնուամենայնիվ, մասնում, որ ինքն է պատճառը, մայրը բարկացել է իր դեմ, դրա համար էլ նամակ չի գրում։ Վահանը երեխայի ծննդյան օրը Սամարղանդից ստանում է մի բացիկ ու ծանոթ. Նինան շնորհավորում է Գագիկին ծննդյան առթիվ և անսահման համբույրներ հղում։ Վահանը ուղարկում է դրանք Ստեփանավան, և Գագիկի երջանկությանը չափ ու սահման չկար. ուրեմն մայրը ներել է իրեն՝ եթե իր հանցանքի պատճառով է բացակայում։ Նա «մի տասն անգամ կարդաց բացիկը, հորաքույրից թաքուն համբույրեց - այն տեղը, որտեղ մոր սիրտը քայքայված էր»³։

Հոգեբանական է, որ մայրիկից ծանոթ ու բացիկ ստանալուց հետո Գագիկը պետք էր փոխվեր, սրամադրությունը բարձրանար, դառնար կարգապահ, պարսպեղ և այլն։ Ա. Ավագյանը չի մոռանում Գագիկի բնավորության փոփոխության մեջ շեշտել մի մանրամասն. հայրը խոստացել էր, որ օգոստոսի տասնհինգին մայրի-

կի հետ կգա Ստեփանավան, և անկողին մտնելով՝ ամեն անգամ քանի-քանի անգամ հաշվում է, թե քանի օր է մնացել մինչև օգոստոսի տասնհինգը։

Պատմվածքում ամեն ինչ տեղը-տեղին է, գործողությունները զարգանում են տրամաբանորեն, Ա. Ավագյանը արհեստականորեն չի «շտապեցնում» դեպքերը։ Օգոստոսի կեսին Վահանը երեխային այցելության է գալիս Ստեփանավան մեմակ։ Գագիկը «շրթունքները սեղմեց, որպեսզի լաց չլինի։ Նա ոչինչ չհարցրեց, ոչինչ չասաց։ Իսկ երբ երեխային իրեն սեղմելով Վահանը հարցրեց, թե նա ինչպե՞ս է զգում իրեն, Գագիկը մտերը վեր բաշեց.

- Է՛հ։
- Բժիշկները մայրիկիդ խորհուրդ են տվել, որ նա մի քսան օր, մեկ ամիսն էլ մնա սանատորիայում,- վերջապես խոսեց Վահանը։
Թագուհին մեջ ընկավ։

- Դե, ի՞նչ կա որ, թող մնա, թող մի լավ առողջանա։
Ճաշից հետո նրանք առանձնացան, և Գագիկը տեսավ, թե ինչպես նորից քիթ-քթի շնչում են»⁴։

Որքան էլ հայրը և հորաքույրը հորդորում են Գագիկին, թե արդեն նա մեծ տղա է, չպետք է ախրի մոր բացակայության համար, և Գագիկն էլ հայտնում է, թե չի տխրում, այնուամենայնիվ երեխան, համոզում է հեղինակը, մնում է երեխա. նա ունի իր զգացմունքներն ու ապրումները, ունի իր հոգեբանությունը։ Ա. Ավագյանը պատմվածքում կարողացել է պահպանել Գագիկի տարիքային «հաշվելիշիոր» և այդ չափումներով է պատկերել նրան գործողությունների մեջ։ Այդպիսի մոտեցումը ապահովել է երեխայի կերպարի ճշմարտացի մարմնավորումը։

Երեւան վերադառնալուց հետո՝ Վահանը և Թագուհին որոշում են այլևս Գագիկի ներկայությամբ խոսք չբացել Նինայի մասին՝ կարծելով, թե նա արդեն խաղաղվել կամ հաշտվել է այն մտքի հետ, որ մայրը քեթև էլի ուշանա, ո՞վ գիտի, գուցե նույնիսկ այլևս չվերադառնա։ Գագիկը մոր մասին հարցեր սակավ էր տալիս, և Թագուհին հանգիստ էր զգում իրեն՝ մտածելով, որ Գագիկի սրտում մոր կարոտից առաջացած վերքերը սպիանում են։ «Իսկ Վահանի հոգում իջել էր մի թալկացող թախիծ, ինչպես ուշ աշման անտառն է թափվում տամուկ հողի վրա։ Նա մի ծանր մորմոր էր զգում՝ տեսնելով, որ երեխան իր սրտում արդեն սկսում է թաղել մեկի հիշատակը, որը կենդանի է...»⁵։

Վահանը խորապես զգացվում է ստեղծված վիճակի ծանրությունից։ Նինան այնպիսի արարք է թույլ տվել, որ սիրած տղամարդը զերադասում է, որ նա որեւէ արկածից կամ հիվանդությունից մահացած լինելը՝ «նախքան այդ զարհուրելի քայլն անելը»⁶։

Բայց հիմա՞։ Ինչպե՞ս վարվել։ Անկարելի է թաղել նրա հիշատակը, բայց բարի հիշելն էլ հեշտ չէ։ Հուսալ, թե կվերադառնա Նինան, միտք չունի, սակայն դժվար է նաեւ իսպառ վտարել սրտից։ Եվ այս ամբողջ շրջայում, խճճված ու խառնաշփոթ հանգույցում՝ ամենագորեղ պատանդը՝ Գագիկը, որի դեմ մյուս բոլոր վաստակներն ու պատճառաբանությունները փոքր են թվում Վահանին։ Ա. Ավագյանը Վահանի այս հոգեբանական ինքնալլու-մի, տառապալից ներքին մտորումների կշռաչափերը՝ Գագիկ-Նինա նմարներով, աստիճանաբար սրում է՝ հասցնելով այնպիսի կուրմիմացիայի, որից հետո անպայման պետք է լուծվեր դրամատիկ հանգույցը։

Գագիկը նորից հոգեկան ճգնաժամ է ապրում. զգում է արդեն, որ հայրիկի ու հորաքույրից հոգատարությունները, մեղմ վերաբերմունքը, մխիթարական խոսքերը արվում ու ասվում են, որպեսզի ինքը հանգիստ լինի, խաղաղվի, բայց ինչ-որ բան թաքցնում են իրարից։ Արձակագրի դիտարկումները միանգամայն համոզիչ են. Վահանի ու Թագուհու խորհրդավոր փախուցները, հարկադիր փաղաքշանքները, նրանց վերաբերմունքի փոփոխությունը մոր բացակայությունից հետո, որոշակիորեն հասունացրին Գագիկին։ Իսկ Վահանի տառապանքն ու անհանգստությունը կրկնապատկվում է՝ տեսնելով որդու ներաշխարհի լուս փոքորիկը։ Եվ երբ դպրոցից կանչում են նրան ու հայտնում, որ Գագիկը ես է մնում բոլոր առարկաներից, սովորված նամակ է գրում Նինային՝ «առանց նախօրոք իրեն հաշիվ տալու, թե ի՞նչ է անում, ի՞նչ պիտի գրի։ Նա գրեց մի ամբողջ էջ և ծրարն շտապ փակեց՝ վախենալով, որ հանկարծ կարող է զոչալ ու պատռել նամակը»⁷։

Վահանի համար էականը երեխայի հոգու խաղաղությունն է, նրա առողջությունը, դասերը։ Նինային հայանում է երեխայի հոգեկան վիճակը, խնդրում, որ նրան հանգստացնելու համար երբեմն մի երկտող ուղարկի։ Գագիկի ուրախությանը ոչինչ չէր կարող հասնել, երբ ծնեռնամուտին նամակ է ստացվում Նինայից։ Մինչդեռ երեխան վառվում է անհամբերությունից՝ Թագուհին անառաբերություն է ցուցաբերում, իսկ Վահանը դանդաղում է ծրարը բանալ։ Սա էլ չէր կարող վրիպել Գագիկի ուշադրությունից. հարազատները ինչու՞ են այսպես վարվում, քանի՞ ամիս է մայրիկից լուր չունեն, հիմա նամակ են ստացել, և այսպիսի վերաբերմունք։

Նինան գրել էր ես՝ Վահանին, և առանձին էլ Գագիկին։ Երեխային գրում էր, որ բուժվում է սանատորիայում, որ բժիշկների խորհրդով անհրաժեշտ է մի որոշ ժամանակ էլ մնալ պատվիրում է լավ սովորել, լսել հայրիկին ու հորաքույրը, չնրսել, չհիվանդանալ և այլն։ Իսկ Վահանին խնդրում էր արձակուրդներին Սամարղանդ ուղարկել երեխային. Թորգոմը մեկնել էր մրցությունների, Գագիկը ոչինչ չի կռահի, հետո ինքը՝ Թորգոմն է

¹ Արիզ Ավագյան, Պատմվածքներ, 1958, էջ 18

² Նույն տեղում, էջ 19։

³ Նույն տեղում, էջ 19։

⁴ Արիզ Ավագյան, Պատմվածքներ, էջ 21։

⁵ Նույն տեղում, էջ 22։

⁶ Նույն տեղում։

⁷ Նույն տեղում, էջ 23։

Հարցեր են սրանք, որոնց պատասխանները ամենեւին էլ պարտադիր չէին, որ տար գրողը: Մակայն արվեստագետ արձակագիրը գտել է ելքը եւ գեղարվեստական հաջող նրբագծերով նվարտին է հասցնում պատմությունը: Նինան անհամբեր ներս է նետվում, փլվում երեխայի մահճակալին եւ սկսում հեկեկալ: Գազիկը

Ա. Ավագյանը կրկին հավատարիմ է մնում իրեն՝ լուծման մեջ առանցնությունը տալիս է Գազիկի ճակատագրին. նրա աչքերում ուրախության արցունքներ են, բռնել է միաժամանակ մոր եւ հոր ձեռքերը, դեմքին շողում է երջանկություն ժպիտ: Մյուսների մասին հեղինակի ենթաբնագրային հուշումները ինչպես ուզում են՝ թող հասկանան կամ մեկնաբանեն իրենք՝ ընթերցողները. Վահանը եւ Նինան նորի՞ց մեկ հարկի տակ կապրեն, Գազիկը «կմիացնի»՞ նրանց խզված կապը, Թագուհու արցունքները տխրության ու վշտի՞ արցունքներ են, որ անամոք հարսը իրենց ընտանեկան պատիվը արատավորել է եւ դարձյալ հայտնվել, թե՞ ուրախության, որ Գազիկը վերստին գտավ մոլոր: Նման հարցականները ավելի են արժեքավորում ստեղծագործությունը, որովհետեւ, մի կողմից՝ ակտիվացնում են ընթերցողին, շարժում նրա երեւակայությունը, մյուս կողմից՝ համոզվում ես, որ Ա. Ավագյանը ճակատառիւ լուծում է ի տալիս, որոնում է հոգեբանականը, ճշմարտացին:

Данная статья посвящена анализу нескольких рассказов талантливого писателя, в ней делается попытка выявить своеобразие автора как тонкого мастера психологического рассказа.

Նույն տեղում, 1958, էջ 29: